

# ԳՏՉԱՎԱՆՔԻ ԵՒ ԴԻԶԱԿ ԳԱԻԱՈՒ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՎՈՒԹԻՒՆԸ

ԹԱՍԱՐԱ ՄԻԱՍԱՅԱ  
minasyan.tamara64@mail.ru

Պատմական Դիզակ Գաւառը կազմատրուել է ԺԶ. դարավերջին՝ Արցախ աշխարհի Միւս Հարանք Գաւադի հարաւային մասում: Արեւելքում նրա սահմանները ձգում են մինչեւ Մողանի Դաշտ, իհսիսում՝ Քեօնդալան Գետի ձախ ափը, արեւմուտքում հասնում Քիրսի Լեռնաշղթային եւ նրանից դեպի Երասխի Հովիտը ձգուող բարձրութիւններին, հարաւում՝ Երասխ Գետին: Գաւառը համապատասխանում է պատմական այն տարածքին, որ պատմահայր Սովուս Խորենացին անուանում է Պարզկանք<sup>1</sup>, ձեռագրերում կոչում է Բազկանք կամ Պանծկանք, աւելի ուշ՝ Զարրայէլ<sup>2</sup>:

Դիզակի կենտրոնն է Գտշավանքը: Այն իհմանադրուել է վաղ միջնադարում, իսկ ժԵ. դարում արդէն յայտնի մշակութային կենտրոն էր եւ ուներ իր գրչասունը:

Ցաւօք, Դիզակի գրչութեան կենտրոնի վերաբերեալ տեղեկութիւնները սույն են. ձեռագրերի մեծ մասը ոչնչացուել է աւերածութիւնների եւ կողոպուտների հետևանքով:

Մեր որոնումները (իհմնուած Մաշտոցեան Մատենադարանում (ՄՄ) պահուող համապատասխան ձեռագրերի, Սփիտքի եւ արտերկրի մատենադարանների ձեռագրացուցակների նկարագրութիւնների, ինչպէս եւ համապատասխան գիտական գրականութեան մէջ այդ գաւառի ձեռագրերին վերաբերող նիւթերի հիման վրայ) այս գրչութեան կենտրոնի վերաբերեալ ի յայտ բերեցին սակաւաթիւ գրչագիր մատեաններ, որոնք իհմնականում գործնական նպատակներով եւ ծիսական արարդութիւնների համար գրուած ձեռագրեր են՝ Աւետարաններ, Մաշտոց, Շարակնոց Նկարագարդման արուեստով նաեւ այս ձեռագրերը առանձնապէս աշքի չեն ընկնում: Ձեռագիր յիշատակարանները տեղեկացնում են, որ ձեռագրեր են գրուել, նկարագարդուել եւ պահպանուել հիմնականում Գտշավանքում, սակաւ թուով՝ Թաղասեռում, Հաղրութիւնկախ Գիւղում, Դիզակայտում, Տող եւ Թաղլար գիւղերում:

## Ա. ԳՏՉԱՎԱՆՔԻ ՁԵՌԱԳՐԵՐԸ

### ՁԵՌԱԳԻՐ Ա1

Դիզակ Գաւառում գրչութեան կենտրոնի մասին վկայող ամենավաղ տեղեկութիւնները 1428ից են: Մի կորած ձեռագիր յիշատակարանից տեղեկանում ենք, որ «յատն ու աերարի ժամանակներում», Ամարասի ե-

պիսկոպոս Մանուկ գրիչն ընդօրինակում է մի Աւետարան Ասադի որդի Սելիխեղ աբեղայի ինվրանքով՝ որպէս յիշատակ նրա ծնողների, եղբայրների եւ ազգակից-մերձաւորների. «Գրեցաւ Աւետարանս ի թուին Հայոց ԴՀԷ [1428] ձեռամբ մեղապարտ տէր Մանուկի ի վիճակս Ամարասայ՝ ի վանքս Քթիսոյ՝ ի դատն եւ անբարի ժամանակիս, որ Թորգումացի ազգն տիրեն աշխարհի եւ ամենեքեան ի մեծ վշտի կան»: Գլխաւոր յիշատակարանում գրիչը խնդրում է յիշել իրեն, իր ծնողներին եւ «զամենայն երախտաւորս ի յաշխարհի», իսկ ստացողի անոնից գրած յիշատակարանում նգովում է բոլոր նրանց, ովքեր կը յանդգնեն կտրել յիշատակարանը<sup>3</sup>:

## Զեռագիր Ա2

Նոյն թուականից Մանուկի ձեռորվ գրուած ու մեզ հասած եւս մի գրչագիր Աւետարան ունենք, որն այժմ պահուում է ՄՄ՝ 8211 թուականարի տակ<sup>4</sup>: Զեռագիրն ունի չորս աւետարանիների պատուերներ, անուանաթերթեր՝ վերեւում թոշունների պատուերներով կիսախորաններ, 176ք թերթի լուսանցքում Գարբիկ հրեշտակապետի պատուերն է, ունի նաև բազմաթիվ լուսանցքագրեր ու զարդագրեր: Ծաղկողի անոնք չի նշում, հաւանաբար գրիչն է: Զեռագիրը գրուել է Յովհաննէսի կաթողիկոսութեան եւ Խոկանիարի, «որ է թորգումածին եւ շարշարող քրիստոնէից», բռնակալութեան տարիներին:

Զալալ իշխանի որդի Յովհաննէսը երկար տարիներ եղել է Աղուանից կաթողիկոս: Վերոնշեալ ձեռագիրն արժեւորուում է նրանով, որ յիշատակարանում առաջին անգամ արձանագրուած է Յովհաննէսի հայրապետութիւնը. «Գրեցաւ ասսուածազիծ սուրբ Աւետարանս ձեռամբ ողնամեղ եւ ապիկար գրչի՝ տէր Մանուկի՝ ի թուականութեանս Հայոց ԴՀԷ (1428)՝ ի յաշխարհս Աղուանից՝ ի վիճակս Ամարասայ՝ ի գեղս Շուշու կոչեցեալ՝ ընդ հովաննէաւ Սուրբ Աստուածածնիս՝ ի կաթողիկոսութեան տէր Յովհաննէսի»<sup>5</sup>: Յետագայի գրիչներն արդէն յիշում են նրա կաթողիկոսութեան տարիները՝ 1456, 1464, 1466, 1467, 1468ին<sup>6</sup>: Իսկ համաձայն Ս. Յակոբայ վանքի՝ Յովհաննէսի հայրապետի տապանագրի, նա մահացել է 1470ին «Այս է հանգիստ տէր Ուհաննէս կաթողիկոս Աղուանից թւ. ԶԺԹ (1470)»<sup>7</sup>:

Զեռագրի յետագայի յիշատակարանից երեւում է, որ այն Մանուկի ընդօրինակած վերջին մասեանն է: Եթի վախճանուել է մեծ սէր ու յարգանք վայելող գրիչը, նրա չորս եղբայրները՝ իրեւն ժառանգութիւն, բաժանել են նրա գրուածքները: Ամարասի Ալեքսիանու եպիսկոպոսին Մանուկի եղբօրորդուն, որպէս յիշատակ բաժին է ընկել այս ձեռագիրը:

Երկու դար յետոյ՝ 1634ին, Յովհաննէս եպիսկոպոսը, որը նոյնական Մանուկ գրչի տոհմից էր, Դիզակի Գաւառի Թաղասեռ Գիւղի Ս. Սարգիս

եկեղեցում մահտեսի Կիրակոսին նորոգել է տալիս Առևտարանը՝ որպէս յիշատակ իրեն, հօրեղբայրներին եւ բոլոր մերձաւոր բարեկամներին՝ Սանուել, Ալեքսիանո, Սարտիրոս, Գրիգոր Եպիսկոպոսներին, Յովհաննես եւ Սարտիրոս աբդաներին, Սարգիս Երեցին, Տէր Թորոսին, իր պապ Յովհաննէսին, հօրը՝ Սարտիրոսին, մօրը՝ Սարգարիսին եւ Եղորը՝ Յովհաննէսին<sup>8</sup>:

### Ձեռագիր Ա3

ՍՍ 9792 ձեռագիրը գրուել է 1477ին Ամարասի Ոմաւանս անապատում՝ ձեռամբ կուսակրօն աբեղայ Տէր Զաքարիայի<sup>9</sup>: Գլխաւոր յիշատակարանից տեղեկանում ենք, որ այս տարիներին անապատում գքչութեան արուեստ էր ուսուցանում Տէր Բարսեղը, ում աշակերտել է Զաքարիան: Գրիշը երախտափառութեամբ է յիշում իր ուսուցչին, ինչպէս նաև Ամարասի արքեպիսկոպոս Տէր Ալեքսիանոսին, որին անուանում է երախտաւոր այր: Խնդրում է յիշել նաեւ իր ծնողներին<sup>10</sup>:

Նոյն թուականին ձեռագիրն իր «հալալ ընչից եւ աշխատանաց» Զաքարիայից զնել է Ալեքսիանոս արքեպիսկոպոսը, բերել Գոշավանը եւ գրել տուել ստացողի իր յիշատակարանը, որտեղ խնդրում է յիշել իր ծնողներին՝ հօրը՝ Հանազիզային, մօրը՝ Սուլթանային, եղորը՝ Կոստանդիանոսին, հօրեղօրը՝ Ամարասի Սանուել Եպիսկոպոսին, նորաբողոք քահանայ Գրիգորիսին եւ բոլոր մերձաւորներին<sup>11</sup>:

Ալեքսիանոսը մեծ ցաւ է ապրում երկրում տիրող ծանր իրավիճակից եւ խնդրում է չմոռանալ նաեւ իրեն ու իր եղորը, որ «միարանցար եւ եկար ի Քրիշոյ վաերս, զի Թուրք ազգս բազմացեալ է եւ Հայս նուազեալ, եւ չարիքը շատացեալ, եւ մեր յոյս Քրիստոս է, զի պանդիտիեր ի միասին սակաւ աւուրցու»<sup>12</sup>: Վերջում Ալեքսիանոսը մեղքերի թողութիւն է հայցում եւ անիծում յիշատակարանը կարողին:

Ալեքսիանոս արքեպիսկոպոսի յիշատակարանը պարունակում է պատմական փաստեր նաեւ Վրաստանի վերաբերեալ: Ականատեսի իրաւունքով յիշատակագիրը դառնացած գրում է այդ խոռվայոյզ ու դաժան օրերի մասին, թէ ինչպիսի մեծ կորուստներ ունեցաւ Հայաստանի հարեւան երկիրը, որոնց պատճառը Ուզուն Հասանի գործած աւերածութիւններն են: Իրականութիւնն այնքան սահմոլեցուցիչ է, որ գրիշը բառեր չի գտնում որակելու տեղի ունեցածը. Ուզուն Հասանը աւերել է ամեն ինչ, մարդկանց կոտորել է, մեծ ու փոքր, երեց, սարկաւագ ու աշխարհական, այր ու կին, դուստր ու որդի գերի տարել եւ «ցան ու ցիր արար աշխարհի, զողըն ու կոկիծն լեզու ոչ կարէ պատմել»<sup>13</sup>:

### Ձեռագիր Ա4

ՍՍ 3701 Առևտարանը 1464ին Վայոց Զորի Երերան վանքում մահտեսի Սուրատի եւ նրա կնոջ՝ Դիլշատի խնդրանքով օրինակել է Սա-

դարիա կրօնաւոր գրիչը՝ «որպէս առաջնորդ հոգոյ իւրոյ եւ պարծանս հաւատոց եւ թողութիւն մնդաց» եւ ի վայելումն Ալեքսիանոսի եւ Սուրբատի<sup>14</sup>: Ստացողի անունից գրիչը լիշտակարանում խնդրում է յիշել Սուրբատին, նրա ծնողներին՝ հօրը՝ Տօղոսողին, մօրը՝ Ազրումալիքին, նաեւ իր եղբայր Էւաւետին եւ քոյր Ազիզին<sup>15</sup>:

Զեռազիրն ընծայուել է Գոշավանքին. «Կամաւն Աստուծոյ ես՝ Աղածանս կալայ սուրբ Աւետարանս, սուրբ Քթիշոյ վանքին, ինձ քառասնից տէր Ալեքսանոս և յիշսկոպոսի ձեռաւրի կատարեցինք քառասունքն»<sup>16</sup>:

### Զեռազիր Ա5

1575ին՝ «ի դառն եւ ի չար ժամանակի, ի դանութեան շահ Թահմաղին՝ ի երկիրս Դիզակ՝ ի գեղս Պայկայթադ՝ ի վանքս Քթիշու Սուրբ Աստուծածինս» Նետրու կրօնաւորի ձեռամբ Մաշտոց է ընդօրինակուել<sup>17</sup>: Զեռազիր ստացողն է Բեկին, որը պատուիրում է ձեռազիրը եւ գրել տալիս յիշտակարան իր եւ բոլոր հարազատների համար: Գլխաւոր յիշտակարանում գրիչը խնդրում է ուժ ու կարողութիւն՝ սկսած գործն աւարտին հասցնելու համար: Նա խնդրում է յիշել իր ծնողներին՝ Սուրբուն եւ Թեղային, Եղայրներին ու քոյրերին, իսկ ստացողի անունից նրա բոլոր հարազատներին՝ ծնողներին, որդիներին, դուստրերին, բալոր կենդանի եւ հանգուցեալ մերձաւորներին՝ յական-յանուանէ նշելով անունները: Գրչի հաղորդածից տեղեկանում ենք նաեւ, որ այս բուականին Գոշավանքի վանահայրը Գալոս Եպիսկոպոսն էր<sup>18</sup>: ԺԵ: դարում ձեռազիրն ստացել է խօս Բաբազը եւ յիշտակարան գրել 189ա էջին:

### Զեռազիր Ա6

Ըստ Հայր Ղետոնդ Ալիշանի՝ 1653-1675ին Գոշավանքի միաբան է եղել Աղուանից կարողիկոս Պետրոս Խանձրեցու եղբայր Մատթեոս քահանան, որի համար 1668ին մի Աւետարան է ընդօրինակուել<sup>19</sup>:

### Զեռազիր Ա7 եւ Ա8

Գոշավանքում է ապրել ու գործել գրասեր Առաքել Վարդապէտ Կոստանեանցը: Նա 1853ին նշանակուել է վանքի վանահայր<sup>20</sup> եւ երկար տարիներ գրադուել վանքի կառավարման ու բարեկարգման հարցերով, ինչպէս նաեւ հայոց լեզու եւ կրօն է դասաւանդել, գրել է պատմութիւններ, որոնք հասել են մեզ: ՄՄ 7822<sup>21</sup> եւ 7823<sup>22</sup> ձեռազրերը Առաքել վարդապէտի Պատմութիւն Արցախի աշխատութեան երկու հատորներն են, որոնք ենդինակը գրել է 1858-1880ին եւ նուիրել իր հոգեւոր ծնող Յակոբ վարդապէտի լիշտակին: Հեղինակն իր մատեանում արժեքաւոր աշխարհագրական տեղեկութիւններ է հաղորդում, որով էլ երկը ձեռք է բերում աղբիւրազիտական արժեք եւ, կարելի է ասել, հանդիսանում է Արցախի մասին աշխարհագրական մի խթնատիա ձեռնարկ: Զի բացաւում, որ այն ժամանակին գործածուած լինի իբրև դասազիրը: Պատմու-

թիւն *Արցախի* երկն աղբիւր է եղել Շաֆֆու Խամսայի *Սելիքութիւնները* աշխատութեան համար: Շաֆֆին զնահատելով Կոստանեանցի երկերի պատմական ու աղբիւրագիտական արժեքը, տեսնում է նաև թերութիւնները եւ տեղին դիտողութիւններ է անում<sup>23</sup>:

Պատմութիւն *Արցախի*ն տեղեկութիւններ է հաղորդում յատկապէս Դիզակի մելիքութեան պատմութիւնից, որը Հայ Ազգագրական Ընկերութեան կողմից առանձին հրատարակուել է «Նիւթեր Հայ Սելիքութեան» մատենաշարով<sup>24</sup>: Խոկ ժամանակագրական ցուցակը, ինչպէս հեղինակն է հաւաստում, դուրս է բերել Գասպար քահանայի ձեռքով գրուած մի ձեռագիր *Մաշտոցից*: Առաջին հատորի յիշատակարանում (156բ-57ա) Առաքել վարդապէտը տալիս է նաև ինքնակենսագրական բնոյրի տեղեկութիւններ, ինդրում է յիշել իր ծնողներին՝ հօրը՝ Աւագին, ում կորցրել է մասուկ հասակում, մօրը՝ Սարիամին, ինչպէս նաև իր հոգեւոր ծնող ճգնազգեաց Յակոբ վարդապէտին, Գոշավանքի միաբաններին, որոնց օգնութեամբ այս գործն աւարտուել է: Գրիշը յատկապէս ակնածանքով է յիշում մօրը, ով քառասունինգ տարի մնացել է այրի եւ վախճանուել ու թաղուել է Գոշավանքում՝ որդուն թողնելով սուզի եւ տրտութեան մէջ:

## Զեռագիր Ա9

1884ին Առաքել վարդապէտ Կոստանեանցը գրում է Գոշավանքի պատմութիւնը<sup>25</sup>: Ինչպէս յիշատակարանում խոստվանում է Պատմութիւնի հեղինակը, այս երկը լրացումն է նախորդ երկու հատորների. «Յայս հատորի պատմագրութեան ցանկում բովանդակել զայն ամենայն թերութիւնն, որ յետոյ շրջելով ընդ ամենայն անոտնակոյն տեղիս...աստի եւս արտազրեալ զպակասութիւնն անցեալ երկուց հասորոց պատմագրութեանց»<sup>26</sup>: Զեռագիրը կարեւոր տեղեկութիւններ է հաղորդում վանքի միաբանութեան կեանքի մասին: Հեղինակը ներկայացնում է իրեն նախորդած վանահայրերին: Գոշավանքի վանահայրն է եղել Մելիք-Եզանի հայր Ղուկաս վարդապէտը, ում յաջորդել է Մեսրոպ Եպիսկոպոսը: Նա առաջնորդ է նշանակուել Մելիք-Եզանի կողմից 1723ին եւ շուրջ 25 տարի ղեկավարել վանքի միաբանութիւնը: Մեսրոպ Եպիսկոպոսի յաջորդն էր նրա որդի Սիմեոն Եպիսկոպոսը, որ «արիացան աշխատասիրութեամբ լուսաւորեաց մեծ իմ պայծառազարդութեամբ զսուրք վանս եւ վերստին իսկ հաստատեաց զմերձակայ կալուածս...»<sup>27</sup>: Վերջինիս էլ յաջորդել է Յովհաննես վարդապէտը: Ապա պատմագիրը ներկայացնում է Տէր Սիմեոն Եպիսկոպոսի եւ Յովհաննես վարդապէտի վանահայրութեան տարիների հրատարձութիւնները: Խոկ Մելիք-Եսայու՝ 1781ին սպանուելոց յետոյ միաբանութեան վիճակը սաստիկ վատանում է, վանքը «աստանօր տկարանայ եւ սկսեալ նուազի

*օրոստորէ», սրան էլ յաջորդում են Աղա Սուհամմադ խանի արշաւակրներից յէտոյ բռնկուած սաստիկ սովոր ու մահտարաժամը:*

Առաքել վարդապետը տեղեկութիւններ է հաղորդում Գտշավանքի հողային սեփականութեան սահմանների վերաբերեալ, որը հաստատում է վանքի կալուածքների մասին 1856 Դեկտեմբերի 1ին Ղարաբաղի կոնսխուորիային ուղղուած տեղեկագրով<sup>28</sup>: Տեղեկութիւններ ենք սուանում նաեւ Մելիք-Եզաննեանների մահմեդականացուած ճիւղի մասին. «Յարձեալ ի դէմս Մահմէտի, այսպէս պեղութէամբ պահեն զօրէս նորա, կարձես թէ Մահմէտս բնաւ չէ այնու հոգուով պահպանեալ, որպէս նորա կամին զոհել զիրարս եւ զորդիս իրեւանց»<sup>29</sup>: Տեղինակը հաղորդում է նաեւ ինքնակենսազրական տեղեկութիւններ: Ձեռագիրը մեզ է աւանդել նաեւ մի գեղեցիկ աւանդազրոյց՝ Անտոն մանկան նահատակութեան պատմութիւնը լենքենուրեան ժամանակաշրջանում:

## Ձեռագիր A10

Գտշավանքից մեզ հասած յաջորդ մատեանը՝ ՍՍ 3881 ձեռագիրը, դարձեալ Առաքել վարդապետ Կոստանեանցի գրչին է պատկանում. այն պատմական նիւթերի ժողովածու է՝ գրուած 1886-1888ին<sup>30</sup>: Այստեղ հեղինակը զետեղել է տարաքնոյց պատմական նիւթեր, տալիս է նաեւ Մելիք-Եահնազարեան տոհմի ժամանակագրութիւնը, հաղորդում է, որ Մելիք-Եսային սպանուել է 1781ին Շուշիի Էրրահիմ խանի կողմից:

Այսիսով, Դիզակ Գաւառի ձեռագրական ժառանգութեան մէջ նշանակալից տեղ են գրաւում Գտշավանքում գրուած կամ այս կենտրոնին առնչուող ձեռագրերը:

## Բ. ԳԻՒՂ ՏԱՔ

### Ձեռագիր F1 (11)

Գաւառի այլ վայրերից եւս ունենք մատեաններ, որոնցից մէկն է 1563ին Տար Գիւղում Յովհաննես երեցի խնդրանքով Նասիպ սարկաւազի ընդօրինակած Աւետարանը<sup>31</sup>: Ձեռագիրն ունի աւետարանչների պատկերներ, կիսախորաններ եւ լուսանցազարդեր: Հայաստանի Կուլտուր-Պատմական Թանգարանի ազգագրական արշաւախումբը Աւետարանը ձեռք է բերել իշեւանցի Մարտիրոս Բաղդասարեանից եւ մուծել թանգարանի հարուստ հաւաքածուի մէջ (թիւ՝ 1325), իսկ 1938ին բերուել է ՍՍ<sup>32</sup>:

## Գ. ԳԻՒՂ ԹԱՂԱՍԵՌ

### Ձեռագիր Գ1 (12)

Բաղդասար գրիչը 1631ին Դիզակի Թաղասեռում գրել է մի Մաշտոց<sup>33</sup>: Խոնաւութիւնից գրադաշտը գունափոխուած է: Թթուակեր ու ցեցակեր այս ձեռագիրն ունի մէկ կիսախորան, բազմաթիւ ճակատազրդեր, լուսանցազարդեր, զարդագրեր: Գլխաւոր յիշատակարանում Բաղդասար գրիչը խնդրում է յիշել տէր Մելիքսէթ վարժապետին, իրեն եւ իր

բոլոր մերձաւորներին՝ հօրը, մօրը, որոնց անունները չի տայիս, կողակցին՝ Բեկիին եղբայրներին, մանաւանդ ձեռագրի պատուիրատու Շահաւարին ու նրա կողակցին՝ Հուրիին, միևն եղօրը՝ Սուլթին, որդիներին՝ Տավարաթարին, Բրթուլին, Պարխուտարին և եղօրորդուն Պետրոս քահանային: Ձեռագրի ստորին լուսանցքներում թողած քազմաթիւ մանր յիշատակարաններից՝ «Վայ զրշիս, զի մեղաւոր է»<sup>34</sup>, երեւում է, որ դատնացած է զրիչը: Նա քանից կրկնում է յայտնի իմաստութիւնը. «Ձեռու զեայ, զիրս մեար»<sup>35</sup>, «Ձեռու փտիք, դառնայ ի հոդ, զիրս մեայ յիշատակորդ»<sup>36</sup>, յետոյ խնդրում «Գծազրողիս, Տէ՛ր, ողորմէս»<sup>37</sup>: Ժ. դարում ձեռագիրը նորոգել է Մարդանս դպիրը և 172բ էջին թողած յիշատակարանում խնդրել է յիշել իրեն: 1745ին ձեռագիրը պատկանել է Շահնազարի որդի Մելիքսէթին: Երկրորդ ստացողի յիշատակարանը մասամբ եղծուած է, և կարդացուող անուններից՝ Շահիման, Օսկի, Սարգիս, հասկացում է, որ նրանք նոյնպես Շահնազարի որդիներն են ու Մելիքսէթի եղբայրները, իսկ Սաշոնցը եղել է նրանց ընտանեկան սրբութիւնը: Դարձեալ յետազայի մէկ այլ յիշատակարան հաղորդում է, որ Տէ՛ր Գրիգորը 1783ին ձեռնադրուել է Արքահամ աստուածաբան վարդապետի ձեռով: Ձեռագիրը յետոյ գտնուել է գերութեան մէջ: 1791ի Ապրիլի մէկին թիֆլիզէցի նալբանդ Սիսոյի որդի եզչիսեօն ազատել է գերուած ձեռագիրը և որպէս յիշատակ նուիրել Ս. Աստուածածին եկեղեցուն, «որ եւ յիշատակն բարի եղիցի տէր Գրիգորի»<sup>38</sup>: Ձեռագրի վերջին ստացողն է ագուլցի Առաքելի որդի Յարութիւնը, ով 1804ին ձեռագիրը գնել է Թիֆլիզում: 100 տարի անց ձեռագիրը բերում է Ս. Էջմիածին:

#### Ձեռագիր Գ2 (13)

Տէ՛ր Յովիհաննեսի պատուելով 1638ին Կիրակոս երեցը Մաշտոց է օրինակել՝ «ի երկիրս Աղուանից, ի զաւասու Դիզակ, ի զիւս Թաղայսէռ՝ ընեղ հովանեսաւ սուրբ Սարգսի եկեղեցո, ձեռամբ մեղաւոր Կիրակոս անարծան իրիցի, յիշատակ տէր Յովաննես սրբանունդ քահանայի և ծնողաց //»<sup>39</sup>: Այստեղ յիշատակարանն ընդհատուում է վերջին թերթն ընկած լինելու պատճառով, ուստի այլ տեղեկութիւններ չունենք: Ըստ 182բ էջի յետազայի յիշատակարանից՝ 1906ին ձեռագիրը հաշուուել է Օ. Բարաղամեանի կողմից կազմուած Վասպուրականի ցուցակի մէջ: Այժմ այն պահուում է ՍՍ 5380 թուահամարի տակ<sup>40</sup>:

#### Ձեռագիր Գ3 (14)

Ժ. դարում Թաղասեռում յայտնի գրիչ էր Կիրակոսը, նա ոչ միայն օրինակել է զքազրեր, այլեւ օգնել է այլոց ձեռագրեր ընդօրինակելու գործում: Կիրակոս քահանան Մելիքսէթ երեցի հետ նոյն եկեղեցում բոլորի մի Աւետարան է սկսել ու աւարտել<sup>41</sup>: Յիշատակարանում Մելիքսէթը Կիրակոսին իր եղբայրն է համարում: Ձեռագիրը չունի գրչութեան

թուական, հաւանաբար գրուել է նախորդ ձեռագրի ստեղծման տարիներին: Այսպէս ենք կարծում, որովհետև եւ Մելքիսէթը, եւ Կիրակոսը եղբայրներ ու ժամանակակից լինելուց բացի, գրչութեան տարին եւ տեղը նշում են նոյն բանաձեւով: «Գրեցաւ Սր. Աւետարանս ի երկիրս Աղուանից՝ ի զաւառս Դիզակ՝ ի գեադս, որ կոչի Թաղասասոն՝ ի դուռն սուրբ Սարգսի ի Շահ Մելքոնյն երրորդ ամի ձեռամբ Մելքիսէթ իրեցու եւ եղբայր իմոյ տէր Կիրակոս քահանայի, որ ի միասին սկսաք եւ աւարտեցար»<sup>42</sup>: Աւետարանը գերի է տարուել Պարսկաստանի Թաւրիկ քաղաք, որտեղից էլ 1806ին երգրումցի պարու Մկրտիչը փրկագնել ու նուիրել է շուշեցի մահտեսի Սրապիոն Շինեանցին: Զեռագիրը պահուել է Շուշիի Ս. Ազգւեցոց եկեղեցում, որտեղ էլ այն տեսել եւ յիշատակարանն արտագրել է Սակար Բարիստարեանցը<sup>43</sup>: Զեռագրի յետազայ ճակատագիրն անյայտ է:

### Զեռագիր Գ4 և Գ5 (15, 16)

Պահպանուած յիշատակարաններից տեղեկանում ենք Թաղասեռում պահուած, քայլ առայժմ անյայտ ես երկու ձեռագրի մասին: 1635ին «ի գեադս, որ կոչի Թեղասասոն՝ թեղ հովանու Սր. Աստուածածինս» մի Աւետարան է ընդօրինակուել<sup>44</sup>: Իսկ գիտի հին եկեղեցում, որ կոչուել է Հին Թղասենի եկեղեցի, եղել է անխնամ ու յիշատակարանը գողացուած մի Աւետարան<sup>45</sup>:

### Դ. ԳԻՒՂ ԹԱՂԱՄ

### Զեռագիր Դ1 և Դ2 (17, 18)

Գասպար քահանան 1834ին այստեղ անվարժ բոլորզորով Սայր Սաշոց է օրինակել: Զեռագրի ստացողը գրիչն է<sup>46</sup>: Իսկ ՍՄ 2464 Շարակնոցը պահուել է Թաղալարում: Գրուել է 1665ին, գրիչը, առաջին ստացողն ու գրչութեան վայրն անյայտ են<sup>47</sup>: Զեռագիրը թերի է՝ սկզբից եւ վերջից թերթերի ընկած լինելու պատճառով: Երկրորդ ստացողը՝ մեծքաղաքից ուստա Միջրան, իր «հայալ վաստակոց» այլազգիններից զնել է ձեռագիրը՝ ի յիշատակ իրեն եւ ազգականներին: Ստացողը յիշատակում է ծննդներին՝ Գրիգորին ու Խանումին, եղբայրներին՝ Աւաքին, Աղայանին, Սահին եւ կողակցին՝ Խանպազուն, որդուն՝ Ուեսին, դստերը՝ Զանակին<sup>48</sup>: Իսկ Սալրումը 1707ին ստացողի անունից յիշատակ է բռնել ձեռագրի մի քանի եջերում: Գլխաւոր յիշատակարանում յիշում է, թէ ինչպէս թշնամին մտել է Արցախի զաւաները, կողոպտել, տարել է ամեն ինչ, գերի են տարուել նաեւ ձեռագրերը, կործանուել ու թալանուել են հոգեւոր կենտրոնները. «Հակզին եկն Վանձայ, Խաչին, Վարածոյա, Դուզաղ ամէն եսիր դարս Դաղիստան: Եղ նորայ այլազգն զօրացան, երկիր խնկարկեցին, վաեր, զանայապատ, եկեղեցիք կօղորդեցին: Զայս

Շարակնոցս այլազգի ձեռաց գնեցի, որ է Շիրվանդալու»<sup>49</sup>: Բարեբախ-տարար, տարիներ յետոյ գտնուել ու փրկուել է այս Շարակնոցը:

## Ե. ԳԻՒՂ ՓԱՐԱԶԱՆՑ

### Զեռազիր Ե1 (19)

Դիզակում՝ «ի գեղս, որ կոչի Փարաջանց՝ ի երկիրս Հաքարու ՚ ի ուսու Շիզափայտու ի թուին ՌԻԳ [1574]» Աբրահամ աբեղան ընտօրինակում է մի Աւետարան: Յիշատակարանում գրիչն անափ Վշտով գրում է, որ դա Գրիգորիս Աղուանից կաթողիկոսի ուրացութեան տարին է: «Կաթողիկոսութեան Տանս Աղուանից տէր Գրիգորիսի, որ երես Թահեսյան փաթշահ անկամա տաջկացուց, մեզ մեծ սուզ եղեւ անմիշիքար»<sup>50</sup>: Մեհրաբ-Բեկի երկու որդիները՝ Գրիգորիսը և Յովհաննեսը, երկար տարիներ գահակալել են Աղուանից կաթողիկոսութիւնը: Զեռազիր աղբիւները Գրիգորիսի գահակալութիւնը նշում են 1556ից: Աղբիւները նշում են նաև, որ նա ուրացել է քրիստոնեութիւնը. «Տէր Գրիգոր՝ որդի Մէջրամբէկին տեառն Խաչենոյ ՌԵ (1556) թուին եւ սա ուրացաւ զՔրիստոս ՌԻԲ-ին [1573]»<sup>51</sup>: Բարիսութարեանցը եւս այս թուականն է ընդունում ուրացութեան տարին: «Գրիգոր կաթողիկոսը 1573ին ուրանում է իր հաւատը, որին փոխարինում է տէր Դաւիթ ԹՇ Առաջանորդի նոյն իսկ թուին, սակայն խաչենցիք մեզ ակյայտ պատճառով խեղրում են՝ կախելով Գանձասարի զանգակատնից»<sup>52</sup>: Զեռազիր աղբիւները չեն խօսում, թէ ինչ պատճառով է Գրիգորիսը ուրացել հաւատը: Միայն Աբրահամ գրիչն է արձանագրում այդ արատաւոր երեւոյթի պատճառը. Գրիգորը պարսկական արքունիքի հարկադրանքով է ընդունել մահմեդականութիւնը: Դա, ըստ Աբրահամ աբեղայի, 1574ին էր, իսկ նրան հենց նոյն տարին յաջորդել է Գրիգորիսի եղբօր՝ Բաղրամար-Բեկի որդին՝ Դաւիթը: Սրանից յետոյ ձեռազիր աղբիւները Գրիգորիսի մասին լուս են:

## Զ. ԳԻՒՂ ՇԱԽԿԱԽ

### Զեռազիր Զ1 (20)

Դիզակի Հայորութի անապատի Շախկախ Գիւղում Յովհաննես երեցի խնդրանքով 1584ին նոյն Աբրահամ աբեղան մեկ այլ Աւետարան է օրինակել<sup>53</sup>: Յիշատակարանում պահպանուել են սակաւ տեղեկութիւններ անապատի միաբանութեան կեանքից: Այս տարիներին ուխտի առաջնորդն էր Յովհաննես եպիսկոպոսը: Ըստ գրչի՝ ձեռազիրը գրուել է Դաւիթը կաթողիկոսի հայրապետութեան տարիներին: Այսուեղ գրչութեան թուականի համապատասխանութեան սխալ կայ, որովհետեւ Դաւիթը, որի մասին խօսուեց վերեւում, կաթողիկոս է եղել Գրիգորիսի ուրացութիւնից անմիշապէս յետոյ՝ 1574ին, ընդամենը մեկ տարի եւ նոյն թուականին է մահացել ակյայտ պայմաններում, ապա նրան յաջորդել է Գրիգորիսի եղբայր Յովհաննեսը, ով աթոռակալել է մինչեւ 1586:

## Զեռագիր Զ2 (21)

Հայինայում մի Աւետարան էլ գրուել է 1673ին «յերկիրս Դիզակու ի զիւս Նաք ընդ հովանեսու սուրբ և կշանաւոր տեղութ, որ կոչի Շախնկախ և այլ միաբանից Յակոբ Եպիսկոպոսին եւ տէր Մկրտչին, տէր Բարտին գրոց աշակերտ Սաղաթին»<sup>54</sup>:

## Է. ՀԱՐԴՈՒԹ

### Զեռագիր Է1 (22)

Եղիա աբեղան, որ 1428ին գործել է Վայոց Զորի Եղեղիս աւանի ճգնաւորի Քար անապատում, իր օրինակած բոլորգիր Աւետարակում յայսնում է իր՝ ծագումով հաղորութեցի լինելը. «Աւարտէցաւ Սուրբ Աւետարան ձեռամբ լոգեամեղ եւ փցուն գրչի Եղիայի, որ անուամբ կոչէն արենայ եւ ոչ գործով, աշխարհաւ յԱղուանից եւ տեղեւ Դիզակցի, եւ զեղաւ Հայրութեցի»<sup>55</sup>: Եղիա գրիչը խնդրում է յիշել հօրը՝ Մեսարին, Եղրորը՝ Զեսարին, ուստիցին՝ Արանասին եւ «զմեղապարտ գրչիս, որ յետ սակաւ ժամանակաց ձեռու իմ հոդանայ եւ մաղթանըս իմ առ ձեզ մնայ»<sup>56</sup>: Զեռագիրը յետազայնում հասել է Ազուլիս, որտեղ էլ այն յայտնաբերել եւ երեսնեօթ ձեռագրերի յիշատակարանների հետ 1911ին Արարատ ամսագրում հրատարակել է Մեսրոպ Մաքուղեանը<sup>57</sup>: Ովկ է ձեռագրի առաջին ստացողը, յայտնի չել, Երկրորդը ազուլիսից Խաթունքէկն է: Եղծուած յիշատակարանից ներքարում ենք, որ նա ունի Գրիգորի կինն է և գնել է ձեռագիրը որպէս յիշատակ իրեն, Կարապէտ որդուն եւ ծնողներին: Երրորդ ստացողի յիշատակարանը 344ա էզում է, դարձեալ եղծուած է և հատուկենու բառերից կարդացում են «Ալեքսանոս, Մարտիրոս: //այլ եւ ամուսին իմ Շիրազն, եւ դուստրն իմ Նովի// եւ Մարգարիտն»: Զեռագիրը զեկը է Ռատակէսր իր եւ ծնողների յիշատակին:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ Գուշավանքից եւ Դիզակ Գաւառի տարբեր բնակավայրերից մեզ են հասել տարբեր բովանդակութեամբ 22 ձեռագրեր, որոնց յիշատակարանները նաև բազմաթի ուշագրաւ տեղեկութիւններ են պահպանել գաւառի պատմութեան ու հոգեւոր կեանքի վերաբերեալ:

Ընդհանուր Աղիւսակ Դիզակի Գաւառի Զեռագրերի

Զեռագիր	Գրիչ	Թուակ.	Ստացող	Վայր	Ներկայ Վիճակ
Աւետարան	Մանուել	1428	Մելքիսէդէ	Գտիչ	կորած
Աւետարան	Մանուել	1428	Ալեքսիանոս (Բ)	գ. Շուշու	ՄՄ8211
Աւետարան	Զաքարիա	1477	Ալեքսիանոս	Ոմաւանս Գտիչ (Բ)	ՄՄ9792
Աւետարան	Մարտարիա	1464	Սուրբատ,	Վայոց Զոր,	ՄՄ3701

			Դիլշատ	Էրերան վանք (Ա), Գտիչ (Բ)	
Մաշտոց	Պետրոս	1575	Բեկի (Ա), խոշա Բաբաք (Բ)	գ. Պայկա- րադ	ՍՍ 6834
Աւետարան	անյայտ	1668	Մատոթեռն	Գտիչ	անյայտ
Պատմութիւն Արցախի	Առաքել Վրդ. Կոստանեանց	1858- 1868		Գտիչ	ՍՍ 7822
Պատմութիւն Արցախի	Առաքել Վրդ. Կոստանեանց	1870- 1880		Գտիչ	ՍՍ 7823
«Պատմութիւն Գոշայ Վանոց»	Առաքել Վրդ. Կոստանեանց	1884		Գտիչ	ՍՍ 3966
Ժողովածոյ	Առաքել Վրդ. Կոստանեանց	1886- 1888		Գտիչ	ՍՍ 3881
Աւետարան	Նասիպ Սարկաւազ	1563	Յովհաննես Երեց	գ. Տաք	ՍՍ 7571
Մաշտոց	Բաղդասար	1631	ՄԵլիքսէթ 1745 (Բ), Յարութիւն 1804 (Գ)	Թաղասեռ	Եղել է գերուած, ՍՍ 3580
Մաշտոց	Կիրակոս Երեց	1638	Տեր Յովհաննես	Թաղասեռ	ՍՍ 5380
Աւետարան		1635		Թաղասեռ	կորած
Աւետարան				Թաղասեռ	կորած
Մայր Մաշտոց	Գասպար	1834	գրիչ	Թաղլար	անյայտ
Շարակնց	անյայտ (Ա), Մայրում (Բ)	1665	Միրզան (Բ)	անյայտ (Ա), Թաղլար (Բ)	ՍՍ 2464
Աւետարան	Աբրահամ Աբդ.	1574		գ. Փարաջա- նաց	Նոր Ջուղա
Աւետարան	Աբրահամ Աբդ.	1584	Յովհաննես Երեց	Շախկախ	Զմիւառ
Աւետարան		1673		Շախկախ գ. Դաք	անյայտ
Աւետարան	Եղիա Աբդ.	1428	անյայտ (Ա), Խաթունքէկ (Բ)	Եղեգիս	

- 1 Սովոր Խորենացի, *Աշխարհացոյց*, առաջաբանը եւ թևն. քնազիրը՝ Բ. Յարմարինեանի, *Սատենագիրը Հայոց*, Հոր. Բ., Անդիլիս, Տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տան Կիլիկիոյ, 2003, էջ 2188:
- 2 Սակար Բարխուդարեանց, *Արցախ*, Բազու, Տպ. Արօր, 1895, էջ 26. Խաւ.՝ Յ. Ոսկեան, *Արցախի Հայերը*, Վիեննա, Միլիթարեան Տպարան, 1953, էջ 13:
- 3 Լեռն Խաչիկեան, *ԺԵ Դարի Հայերէն Զեռազրերի Յիշատակարաններ*, Հոր. Ա. Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1955, էջ 385:
- 4 ՍՍ ձեռ. 8211, թերթ՝ 369, նիւթ՝ թուղթ, 23,5x15,5, զիր՝ բոլորզիր, տող՝ 19:
- 5 Նոյն, 359թ-60ա:
- 6 Լեռն Խաչիկեան, *ԺԵ Դարի Հայերէն Զեռազրերի Յիշատակարաններ*, Հոր. Ա. Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1958, էջ 66, 219, 244, 245, 272. Խաւ.՝ Ոսկեան, էջ 162:
- 7 Բարխուդարեանց, *Արցախ*, էջ 171:
- 8 Նոյն, էջ 361ա:
- 9 ՍՍ ձեռ. 9792, թերթ՝ 335, նիւթ՝ թուղթ, 21,6x16, զիր՝ բոլորզիր, տող՝ 19. Խաւ.՝ Լեռն Խաչիկեան, *ԺԵ Դարի Հայերէն Զեռազրերի Յիշատակարաններ*, Հոր. Գ. Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1967, էջ 460:
- 10 Նոյն, էջ 330թ:
- 11 Նոյն, էջ 331ա:
- 12 Նոյն, թղ. 331թ:
- 13 Նոյն:
- 14 ՍՍ ձեռ. 3701, թերթ՝ 277, նիւթ՝ թուղթ, 27,5x16,5, զիր՝ բոլորզիր, տող՝ 21:
- 15 Նոյն, էջ 279ա:
- 16 Նոյն, թղ. 279թ:
- 17 ՍՍ ձեռ. 6834, թերթ՝ 189, նիւթ՝ թուղթ, 17,3x13,5, զիր՝ բոլորզիր, տող՝ 17-18:
- 18 Նոյն, էջ 187թ-189ա:
- 19 Ղետոն Ալիշան, *Այսական Վենետիկ*, Ար. Ղազար, 1898, էջ 270:
- 20 ՍՍ, Կաթողիկոսական դիման, թղթ. 168, տալ. 41:
- 21 ՍՍ ձեռ. 7822, թերթ՝ 161, նիւթ՝ թուղթ, 20,5x17, զիր՝ նտորզիր, տող՝ 19:
- 22 ՍՍ ձեռ. 7823, թերթ՝ 117, նիւթ՝ թուղթ, 20,5x17, զիր՝ նտորզիր, տող՝ 15-27:
- 23 «Ասորել վարդապետը իրաւ է իր պատմութեան մէջ ժամանակագրական կարգը չի պահպանել և իմաները իրաց տեսալի համեմատ չէ դասաւորել, եւ երա աշխատութիւնը աւելի մի անկազ հաւաքածու է, քան թէ պատմութիւն, այնուամենային երա զրբերը բովանդակում են իրենց մէջ թէն անմշակ, բայց բաւական առաստ նիւթ պատմութեան համար: Ասորել վարդապետի երկու հասորեների մէջ կան եւ այնպիսի զույներ, որ կարող են ծառայել իրեն աղբիւր Դարաբաղի մէլիքների պատմութեան համար: Իսկ որ ամենց հետաքրքիր է դա է մի ժամանակագրական ցուցակ Դարաբաղի նշանաւոր անցքերի մասին, սկսեալ 1721 թուականից մինչև 1813 թուականը» (Շաֆֆի, Խամսայի Մելիքութիւնները, Երկերի Ժողովածու, Հոր. 9, Երեւան, Սովորական Գրող, 1987, էջ 609-610):

- <sup>24</sup> Ա. Կոստանեանց, Դիզակի Մելիքութիւնը. Նիւթեր Հայ Մելիքութեան Մասին. Պրակ Ա., Վաղարշապատ, Տպ. Մայր աթոռ Սր. Էջմիածնի, 1913:
- <sup>25</sup> ՍՍ ձեռ. 3966, թէրթ՝ 11, նիւթ՝ բուլթ, 22,5x18, զիր՝ նոտրզիր, տող՝ 20-27: Երկը «Պատմութիւն Գոշայ Վանուց» վերնագրել է Խաչիկ Վարդապետ Դադեան (Յ. Թոփհան, Յուցակ Զեռազրաց Դադեան Խաչիկ Վարդապետի, Մասն Ա., Վաղարշապատ, Տպ. Մայր աթոռ Սր. Էջմիածնի, 1898, էջ 102): Այս խորազրով է երկը ներկայացում նաև ՍՍ ցուցակում (Յուցակ Զեռազրաց Մաշտոցի Ալուան Մատենադարանի, Հոր. Ա. Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ. 1965, էջ 1120): Բնագիրը ընդարձակ առաջարանով հրատարակել է Մաղալեանը (Ա. Մաղալեան, «Աստեղ Կոստանեանցի «Պատմութիւն Գոշայ Վանուց» Աշխատութիւնը», Բանիք Մատենադարանի, Թ. 18, Երեւան, «Գիտութիւն» Հրատ., 2008, էջ 283-304):
- <sup>26</sup> Նոյն, 1ա:
- <sup>27</sup> ՍՍ, ձեռ. 3966, թղ. 2ա:
- <sup>28</sup> ՍՍ, Կաթողիկոսական դիւան, թղթ. 182, վար. 449:
- <sup>29</sup> Նոյն, թղ. ճա: Մելիք Եզանեանների մասին աւելի մակրամասն տե՛ս՝ Լէօ, Երկերի Ժողովածու, Հոր. Յ. Գիրը 2, Երեւան, Հայաստան Հրատ., 1973, էջ 364:
- <sup>30</sup> ՍՍ ձեռ. 3881, թէրթ՝ 195, նիւթ՝ բուլթ, 18x11,5, զիր՝ նոտրզիր, տող՝ 20:
- <sup>31</sup> ՍՍ ձեռ. 7571, թէրթ՝ 186, նիւթ՝ բուլթ, 23,5x19,5, զիր՝ բոլորզիր, տող՝ 25:
- <sup>32</sup> Օ. Եզանեան, «Կարանևարայի (Քշեւանի) Սր. Ամենափրկիչ Եկեղեցու Զեռազրերի Հաւաքածուն», Էջմիածնի, 1971, ԺԲ, էջ 43:
- <sup>33</sup> ՍՍ ձեռ. 3580, թէրթ՝ 174, նիւթ՝ բուլթ, 19x14,5, զիր՝ բոլորզիր, տող՝ 24:
- <sup>34</sup> Նոյն, թղ. 28ա, թղ. 107ա և այլուր:
- <sup>35</sup> Նոյն, թղ. 107ար:
- <sup>36</sup> Նոյն, թղ. 111թ-112ա:
- <sup>37</sup> Նոյն, էջ 108ա:
- <sup>38</sup> Նոյն, էջ 171թ:
- <sup>39</sup> ՍՍ, ձեռ. 5380, էջ 182թ:
- <sup>40</sup> ՍՍ 5380, թէրթ՝ 182, նիւթ՝ բուլթ, 22x15, զիր՝ բոլորզիր, տող՝ 20:
- <sup>41</sup> Յ. Թոփհան, Յուցակ Զեռազրաց Դադեան Խաչիկ Վարդապետի, Մասն Բ. Վաղարշապատ, Տպ. Մայր աթոռ Սր. Էջմիածնի, 1900, էջ 46:
- <sup>42</sup> Նոյն, էջ 46. հմտն. Ձեռ. 5830, էջ 182թ:
- <sup>43</sup> Բարիստարեանց, Արցախ, էջ 143:
- <sup>44</sup> Թորգոն Արք. Գուշակեան, «Յուցակ Հայերէն Զեռազրաց Սր. Նշանի Վանուց Մերաստիա», Հանուլ Ամսորեա, Վիեննա, Միհրարեան Տպարան, 1925, էջ 476:
- <sup>45</sup> Բարիստարեանց, Արցախ, էջ 69:
- <sup>46</sup> Թոփհան, Յուցակ Զեռազրաց. Մասն Ա., էջ 50:
- <sup>47</sup> ՍՍ 2464, թէրթ՝ 296, նիւթ՝ բուլթ, 12x9,2, զիր՝ բոլորզիր, տող՝ 22:
- <sup>48</sup> Նոյն, էջ 179ա:
- <sup>49</sup> Նոյն:
- <sup>50</sup> Ս. Տէր-Աւետիսէան, Յուցակ Զեռազրաց Նոր Ջուլայի Ամենափրկիչ Վաերի, Ա., Վիեննա, Միհրարեան Տպարան, 1970, էջ 127:
- <sup>51</sup> Թոփհան, Յուցակ Զեռազրաց. Մասն Ա., էջ 89:

- <sup>52</sup> Ս. Բարիսովարեան, Պատմութիւն Աղուանից, Հոր. Բ., Թիֆլիս, Տպ. Օ. Աղանեանի, 1907, էջ 21:
- <sup>53</sup> Ս. Վրդ. Քեշիշեան, Ցուցակ Հայերէն Ձեռազրաց Զմիւտի Կանքի Մատենադարանին, Վիեննա, Սիմիարեան Տպարան, 1964, էջ 37:
- <sup>54</sup> Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ V, Արցախ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1982, էջ 181:
- <sup>55</sup> Ռուկան, էջ 20:
- <sup>56</sup> Խաչիկեան, ԺԵ Դարի Հայերէն, Հոր. Ա., էջ 382-83:
- <sup>57</sup> Մերուպ վրդ. Մարտունեան, «Ազուլիսի Եւ Շրջակայրի Ձեռազրերը», Արարատ, 1911, էջ 567:
- <sup>58</sup> Նոյն, էջ 567:

#### THE MANUSCRIPTS OF GTICH VANK AND DIZAK DISTRICT (SUMMARY)

TAMARA MINASYAN  
minasyan.tamara64@mail.ru

The historical district of Dizak in the southern part of the Mus Haband province of Artsakh was formed at the end of the 16<sup>th</sup> century. Its eastern borders reached the plane of Mughan, in the north the left bank of the Keondalan River, in the west the Kirs mountain chain and the heights along the River Yeraskh, and in the south the Yeraskh River. The district corresponds to the historical territory which Movses Khorenatsi named Parzkank (Bazkank, Pantzank in manuscripts, and later renamed Jabrayel).

The Gtich Vank monastery, located at the center of the district, was founded in the early Middle Ages and in the 15<sup>th</sup> century had become a renowned cultural center with its scriptorium. Nevertheless, we know very little about the monastery's manuscript production, as most manuscripts were lost during ravages and pillages.

Basing her work on the information gathered from various manuscript catalogues pertaining to this province, the author gives a full picture of the manuscript production of the District of Dizak, categorizing the manuscripts as *Gospels*, *Mashtotses*, Ritual books and Hymnals.

The author has been able to list a total of 22 manuscripts of diverse contents which come from the Gtich Vank monastery and the province of Dizak. The information collected from the colophons of these manuscripts enables us to conclude that the monastery of Gtich Vank was the main location where manuscripts were written, illuminated and kept. There were, however, other less important locations too in the district, like Taghaser, Shakhkakh, Dizapayt, Togh and Taghlar villages.